Արձանագրություն N 5

«ՀՀ ՆԳՆ ԵՄԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2023/Հ-82» ծածկագրով երկու փուլով մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկրորդ փուլի հայտերի բացման նիստի

ք.Երևան **<< 10>> 01. 2024թ.**

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԵՄԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2023/Հ-82 ծածկագրով երկրորդ փուլի հայտերի բացման նիստում արձանագրվեց՝

1. ՀՀ ՆԳՆ ԵՄԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2023/Հ-82 ծածկագրով երկրորդ փուլի հայտերի ներկայացման վերջնաժամկետին էլեկտրոնային փոստի միջոցով հայտ է ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերությունը: Հայտ ներկայացրած մասնակիցը հայտով ներկայացրել է պահանջվող բոլոր փաստաթղթերը: Գնային առաջարկի ծրարը ստորագրվել է նիստին ներկա գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից և տրվել է ի պահ հանձնաժողովի քարտուղարին:

2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը: Հայտի տեխնիկական բնութագրի 5-րդ կետի բ) ենթակետում նշված է, որ ընտրված մասնակիցը սահմանված կարգով երկրոդ փուլի հայտի հետ միասին հանձնաժողովին է ներկայացնում նաև առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտորների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, ինքնակենսագրություն (CV)) պատճենները, սակայն վերոնշյալի համաձայն ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել: Հայտի տեխնիկական բնութագրի 5-րդ կետի բ) ենթակետում կա նաև նշում այն մասին , որ «Վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման վկայական և այլ ....» , սակայն հրավերով նման պահանջ չկա սահմանված, ուստի, եթե մասնակից կազմակերպությունը ցանկանում է մատուցվող ծառայության որակի բարձրացման նպատակով ներգրավել նաև ներքին աուդիտորների միջազգային որակավորում ունեցող մասնագետի , ապա անհրաժեշտ է նշել որ ծառայությունների մատուցմանը ներգրավվելու է նաև ներքին աուդիտորների միջազգային որակավորում ունեցող մասնագետ և նշել կոնկրետ մասնագետին վերաբերող տվյալներ:

Հանձնաժողովը որոշեց՝

<< ՀՀ ՆԳՆ ԵՄԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2023/Հ-82>> ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կեղի կունենա 16.01.2024թ.-ին ժամը 15:00-ին ՀՀ ՆԳՆ , Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Պետրոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Սիմոնյան

Կ. Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ասատրյան